84. ԴԱՆՁԱԿ ՔԱՂԱՔ (ԿԻՐՈՎԱԲԱԴ)

Քաղաքում հայկական հուշարձաններ շատ կան, բայց համեմատաբար նոր են։ Համաձայն վկայությունների, դրանցից միայն երկուսը կարող են մտնել մեր ծրագրի մեջ (մինչև XVII *դարի վերջը)։ Սակայն ավելորդ չենք համարում թվարկել բոլորը։*

Ա. Ս. Հովհաննես-Մկրտիչ եկեղեցի, շինված է 1633 թ., գտնվում է Քիլիսաքենդ թաղամասում, թաղածածկ շենք է՝ վեց մույթերի վրա. առջևամ ունեցել է գավիթ՝ շինված 1816 թ. և զանգակատուն՝ շինված 1869 թ.։ Գավթի ներսում և շրջապատում թաղված են եղել XVIII *դարի նշանավոր գործիչներ։*

Բ. Ս. Լուսավորիչ եկեղեցի. հիմնվել է 1853 թ. և ավարտվել՝ 1869 թ.։

Գ. Ս. Գևորգ. հասարակ շենք. ժամանակն անհայտ։

Դ. Ս. Աստվածածին. կառուցված է 1712 թ.։ Սրանցից բացի եղել են նաև մի քանի մատուռ-ուխտատեղիներ. ս. Աստվածածին՝ *1867 թ.,* ս. Սարգիս, ս. Կիրակոս և ս. Յուղիտա։ *Վերջին երկուսի անունները հիշատակված են մեկ տապանաքարի վրա, որը կոտրված է չորս մասի։ Նրա արձանագրության մնացորդներից կարելի է ենթադրել, որ դրանք կառուցվել են :ՌԻԹ: (1580) թվականին*[1]*։*

809. Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՄԿՐՏԻՉ *եկեղեցու հարավային պատին, արևի ժամացույցի տակ.*

Ի ժամանակն Ովանէս կաթուղիկոսի, թվին :ՌՁԲ: (1633) ամի շինեցաւ սուրբ
Ովանէս եկեղեցին:

Հրատ. Բարխուդարեանց,՝ 37։ Լալաեան, V, 299։

810. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ *վրա, որ գտնվում է ս. Հովհաննեսի հարավային ավանդատան մեջ.*

Տէր Յիսուս Քրիստոս. :ՌՃՂԱ: թվին (1742).
Այս է տապան սուրբ Ներսէսի
Եւ Աղուանից կաթուղիկոսի.
Եղև վախճան հանդիսի
Երկյոբելեան (100) կյանս հասի,
Ապա կոչումն տեառն լսի
Փոխեալ ասէն յերկինս դասի.
Հազար երկու հարիւր ամի,
:ԲԺ: թուի (1763),
Եւ Բարաղասի
Ներ սորա անուշ հիշատակի.

Ծանոթ. Հրատարակիչը վերջին երկու տողերը վատ է վերծանել։ Ճիշտ չէ նաև առաջին տողի թվականը, որովհետև Ներսեսը մահացել է 1763թ., որը համապատասխանում է արձանագրությանը։

Հրատ. Բարխուդարեանց, 36։

811. ՏԱՊԱՆԱՔԱՐԻ *վրա, նախորդի մոտ.*

Այս է հանգիստ Իսրայէլին,
Որ է ազնիւ և զովելին,
Նման արդարոյն Աբէլին,
Եւ որդի Մելիք Հաթամին.

---

1 *Հմմտ. Բարխուդարեանց, 36—52։ Լալաեան, V, 299—301։*

Ութուտասան կեանք սկալի
Առնու անանց պարգևս լի
Եւ մեզ եթող տրտմութեամբ լի.
:ՌՄԻԵ: թուի (1776)
Եւ :ԺԵ: (15) Մայիսի:

Հրատ. Բարխուդարեանց, 36։

Ս. ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ գավթի մեջ եղել են հետևյալ տապանագրերը.

812. Այս է տապան սուրբ Եղիշէի առաջնորդ Վարդան վարդապետին. թվ. :ՌԱՁ: (1757):

Հրատ. Բարխուդարեանց, 38։

813. Այս է տապան Զարաբերդցի Աթանաս վարդապետի... :ՌՄԺԳ: (1764):

Հրատ. Բարխուդարեանց, 38։

814. Այս է շիրիմ սուրբ Երուսաղէմայ նուիրակ բոխաթցի Ֆարսուն վարդապետի. :ՌՄԼԵ: (1786):

Հրատ. Բարխուդարեանց, 38։

815. Այս է տապան Մուս անապատի առաջնորդ Ցարուբիւն վարդապետի. :ՌՄԽԹ: յունիս :ԺԶ:-ին (1800 հունիս 16):

Հրատ. Բարխուդարեանց, 38։

816. Այս է տապան սուրբ Ստեփաննոս նախավկայի միաբան Ստեփաննոս վարդապետի :ՌՄՁԳ: (1844):

Հրատ. Բարխուդարեանց, 38։

817. ՆՈՒՑՆ ԳԱՎԹԻ հյուսիսային մուտքի առաջ, արտաքուստ, տապանաքարի վրա.

Այս է տապան Կորգի որդի մէլիք Մնացականին. :ՌՄԻ: (1771):

Հրատ. Բարխուդարեանց, 38։

818. ՆՈՒՑՆ ԳԱՎԹԻ հարավային կողմում, արտաքուստ, տապանաքարի վրա.

Անմոռաց յայս տապան քաջ անուանի հանգչի մարմին մելիք Առստամի. յազգէն Բագրատունի, հայկազանց տոհմի. տիրող Բարում, Գանձակ նահանգի. ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամի:

Հրատ. Լալաեան, V, 268։

819. ՆՈՒՑՆ ԳԱՎԹԻ արևմտյան մուտքի առաջ, արտաքուստ, տապանաքարի վրա.

Այս է տապան Աւագ վարդապետին, որ է Զարապերտու Մեծ-Կունէից. :ՌՄԽԵ: (1796):

Ծանոթ. *Սա ժամանակի հերոս Դալի Մահտասի կոչվածն է։*

Հրատ. Բարխուդարեանց, 38։

820. ՆՈՒՑՆ ԳԱՎԹԻ հյուսիսային կողմում, պարապետի մեջ, տապանաքարի վրա.

Այս է տապան Զարաբերդցի Սարգսի որդի Արզուման Ուզպաշուն. :ՌՄԽԵ: թուին (1796):

Ծանոթ. *Սա Թյուլլի-Արզուման կոչված հերոսն է։*

Հրատ. Բարխուդարեանց, 38։